ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

Կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի կյանքում ՍՄԿԿ XXVI համագումարն առանձնակի տեղ ունի։ Այն մեծ ուշադրություն նվիրեց նաև գաղափարական աշխատանքին։ Այժմ տեսնենք թե ինչո՞վ էր դա պայմանավորված։ Կուսակցության գաղափարական-դաստիարակչական աշխատանքի դերի հետագա բարձրացումն ամենից առաջ պայմանավորված է կոմունիզմի կառուցմամբ։ ՍՄԿԿ XXVI համագումարը, ինչպես հայտնի է, որոշեց կուսակցության տնտեսական քաղաքականության խնդիրները 1980-ական թվականների համար, հաստատեց ՍՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական ուղղությունները 11-րդ հնգամյակում։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում արագանում է սոցիալական զարգացման պրոցեսը, զգալիորեն աճում են տնտեսական շինարարության մասշտաբները, ավելի ու ավելի բարդ խնդիրներ են ծառանում մեր առջև։ Այս ամենը, հասկանալի է, պահանջում է կատարելագործել գաղափարական աշխատանքը, որը կոմունիզմի համար մղվող պայքարի կարևոր ճակատն է։ Զարգացած սոցիալիզմին բնորոշ է ժողովրդի կուլտուրայի, կրթվածության, նրա իրազեկության բարձր մակարդակը։ Քանակապես և որակապես ընդլայնվել է մեր գաղափարական աշխատողների տրամադրության տակ եղած միջոցների զինանոցը։ Ամենօրյա ինֆորմացիայի հուսալի միջոց են 380 միլիոն օրինակ թերթերն ու ամսագրերը։ Մեզ մոտ ամեն օր լուսավորվում են 75 մլն հեռուստացույցների էկրաններ[1], եթե 1965 թ. 100 ընտանիքին ընկնում էր ընդամենը 24 հեռուստացույց, ապա 1980 թ.՝ 85։ Միջին հաշվով յուրաքանչյուր ընտանիք ստանում է 4—5 թերթ ու ամսագիր[2]։ Մեր հանրապետությունում ներկայումս լույս է տեսնում 120 անուն թերթ և ամսագիր՝ 2 մլն 200 հազար միանվագ տպաքանակով[3]։ Հայկական հեռուստատեսությունը հաղորդումներ է տալիս երկու ծրագրով, ռադիոն՝ 3։

Անդրադառնալով գաղափարական աշխատանքի հրատապության հարցերին, ՍՄԿԿ XXVI համագումարն ուշադրություն հրավիրեց մի հանգամանքի վրա ևս։ Նոր մարդու դաստիարակությունը Սովետական Միությունում ընթանում է սոցիալիզմի և կապիտալիզմի միջև գաղափարական սրված պայքարի պայմաններում։ Մեր հակառակորդները գաղափարական բոլոր միջոցներով ձգտում են արատավորել սոցիալիզմը, խեղաթյուրել մեր կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականությունը, գաղափարական դիվերսիաներ կազմակերպել սոցիալիստական երկրների դեմ։ Ինչպես նշվեց համագումարում, «աճել է դասակարգային հակառակորդի պրոպագանդիստական միջոցների ակտիվությունը, ուժեղացել են սովետական մարդկանց գիտակցության վրա քայքայիչ ազդեցություն գործելու նրա փորձերը»[4]։ Գաղափարական աշխա-

---

1 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 123։

2 В. Ф. Правоторов, XXVI съезд КПСС и вопросы идеологической, политико-воспитательной работы, М., 1981, с. 40.

3 Ա. Ա. Հովսեփյան, ՍՄԿԿ XXVI համագումարը և գաղափարա-դաստիարակչական աշխատանքի հետագա կատարելագործման հարցերը, Երևան, 1981, էջ 13։

4 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 123։

տանքում, հասկանալի է, պետք է լիովին հաշվի առնվեն այս երևույթներն ու հանգամանքները։ Ելնելով դրանից, ՍՄԿԿ XXVI համագումարը խնդիր դրեց վերակառուցել գաղափարական աշխատանքը։ Այդ վերակառուցումը, իհարկե, կարճատև կամպանիա չէ, այն պահանջում է բազմակողմանի ու քրտնաջան աշխատանք և նախատեսված է շատ տարիների համար։ Գաղափարական աշխատանքի երկարատև գործողության փաստաթուղթ է գաղափարական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին ՍՄԿԿ Կենտկոմի 1979 թ. ապրիլի 26-ի որոշումը։ Վերակառուցել գաղափարական աշխատանքը, չի նշանակում հրաժարվել ընդունված համակարգից։ Ընդհակառակը, պետք է պահպանել այն ամենը, ինչ արժեքավոր է։ Վերակառուցել գաղափարական աշխատանքը, ամենից առաջ նշանակում է հարստացնել պրոպագանդայի բովանդակությունը, ամրապնդել նրա կապը կոմունիստական շինարարության հրատապ խնդիրների հետ, բարձրացնել գիտական մակարդակը և ուժեղացնել նրա հարձակողական բնույթը։ Մյուս կողմից, վերակառուցումը պահանջում է կատարելագործել գաղափարական աշխատանքի ձևերը։

Գաղափարական աշխատանքի կարևոր օղակներից մեկը կուսակցական ուսուցումն է, կոմունիստների մարքս-լենինյան կրթությունը, որին միշտ էլ մեծ ուշադրություն է նվիրվել։ Մեր կուսակցությունն ունի կոմունիստների քաղաքական կրթության կազմակերպման հարուստ փորձ։ Խնամքով պահպանելով այդ փորձը, ՍՄԿԿ-ն մշտապես կատարելագործում է կուսակցական ուսուցման սիստեմը՝ հաշվի առնելով երկրի ներքին ու միջազգային դրության փոփոխվող պայմանները։ 1980—81 ուստարում կուսակցական լուսավորության սիստեմում պարապում էր գրեթե 23 մլն մարդ[5]։ Այդ նույն ժամանակամիջոցում Հայաստանում քաղաքական ուսուցման և տնտեսագիտական կրթության տարբեր ձևերում սովորում էր մոտ 1 մլն մարդ[6]։ Համեմատության համար նշենք, որ 1979—80 ուստարում ունկնդիրների թիվը կազմում էր 763500 մարդ[7]։

ՍՄԿԿ XXVI համագումարը բարձր գնահատեց կոմունիստների մարքս-լենինյան կրթության կազմակերպման փորձը, նշեց, որ վերջին տարիներին կուսակցական ուսուցումը ձեռք է բերել որակական նոր գծեր։ Կուսակցական կրթության ծանրության կենտրոնը փոխադրվել է դեպի ՍՄԿԿ տեսության և քաղաքականության հրատապ պրոբլեմների ուսումնասիրությունը։ Աստիճանաբար կրճատվում է տարրական օղակի տեսակարար կշիռը, քանի որ կուսակցության կազմում յուրաքանչյուր տարի նոր համալրման շնորհիվ տարրական կրթություն ունեցող անձանց թիվը նվազում է և, ընդհակառակը, ավելանում է միջնակարգ կրթություն ունեցողների թիվը։

Կուսակցական ուսուցման, կոմունիստների մարքս-լենինյան կրթության արդյունավետությունը բարձրացնելու, նրա որակը բարելավելու խնդիրը շատ բանով պայմանավորված է նաև պրոպագանդիստների կազմով, նրանց աշխատանքով։ Հիշենք Վ. Ի. Լենինի խոսքերը պրոպագանդիստների մասին։ «Ոչ մի վերահսկողություն,— գրում է նա,— ոչ մի ծրագիր և այլն, բացարձակապես իվիճակի չեն փոփոխելու պարապմունքների այն ուղղությունը, որ որոշվում է դասախոսների կազմով»[8]։ Եվ պատահական չէ, որ կուսակցությունը միշտ էլ սևեռուն ուշադրություն է դարձրել պրոպագանդիստների ընտրության, նրանց դաստիարակության հարցերին։ Բացառություն չկազմեց նաև ՍՄԿԿ XXVI համագումարը, որը բարձր գնահատեց պրոպագանդիստի դերը, նրա դժվարին ու պատասխանատու աշխատանքը։ «Պրոպագանդիստը,— նշվեց

---

5 Նույն տեղում, էջ 129։

6 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտկոմի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երևան, 1981, էջ 80։

7 «Սովետական Հայաստան», 21. IX. 1980։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 588։

համագումարում,— գլխավոր դեմքն է կուսակցական ուսուցման սիստեմում։ Հենց նրանից է մեծապես կախված, թե ինչպիսիք կլինեն սեմինարները, քաղդպրոցները, համալսարանները։ Թե արդյոք դրանք կլինե՞ն այնպիսի վայր, որտեղ երբեմն իշխում է ձանձրույթը, որտեղ միայն «սպանում են» սահմանված ժամերը, թե՞, ընդհակառակն, դրանք ամենուրեք կդառնան կուսակցական կենդանի մտքի և խոսքի իսկական կենտրոններ։ Կուսակցության գաղափարախոսական, պրոպագանդիստական ակտիվից է առաջին հերթին կախված մարդկանց վերաբերմունքը կուսակցական ուսուցման նկատմամբ»[9]։

Սովետական Միությունում աշխատում է պրոպագանդիստների մի հսկայական բանակ։ Ահա մի քանի տվյալներ. 1980—81 ուստարում հաշվվում էր 2,4 մլն պրոպագանդիստ, որոնց 88,4%-ն ուներ բարձրագույն կրթություն[10]։ Հայաստանի կուսակցական կազմակերպություններում աշխատում են մոտ 40 հազար պրոպագանդիստներ[11]։ Կոմունիստական կուսակցությունը մշտապես հոգ է տանում պրոպագանդիստների կազմի բարելավման մասին։ Գնալով բարձրանում է պրոպագանդիստների որակական կազմը։ Վերջին ժամանակներս նրանց շարքերը զգալիորեն համալրվել են կուսակցական, սովետական, տնտեսական աշխատողների և ժողովրդական տնտեսության մասնագետների հաշվին։ Բավական է նշել, որ 1969—1975 թթ. պրոպագանդիստների ընդհանուր քանակի մեջ ղեկավար աշխատողների և մասնագետների տոկոսը 50,4-ից հասել է 72,8-ի[12]։ Այդ ուղղությամբ դրական տեղաշարժեր են կատարվել նաև մեր հանրապետությունում, որտեղ պրոպագանդիստական աշխատանք են կատարում ավելի քան 15 հազար կուսակցական, սովետական և տնտեսական ղեկավար աշխատողներ[13]։ Պարապմունքների անցկացմանը ղեկավար աշխատողների մասնակցությունը դրական է ազդում կոմունիստական շինարարության կոնկրետ պրակտիկայի հետ ուսուցման կապի ամրապնդման վրա։ Լավ իմանալով գործերի վիճակը ձեռնարկություններում և արտադրամասերում, նրանք հնարավորություն ունեն պարապմունքների ընթացքում մատչելի ձևով շարադրելու կուսակցության տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը և այն շաղկապելու տվյալ կոլեկտիվի խնդիրների հետ։ Նման պրակտիկայի շնորհիվ աճել է նաև ունկնդիրների հետաքրքրությունը, քանի որ էապես ընդլայնվել են երկրի, քաղաքի, շրջանի կյանքի հետ առնչված հարցերին համամանալի պատասխաններ ստանալու հնարավորությունները։ Իր հերթին ղեկավար աշխատողների համար պարապմունքներ անցկացնելն աշխատավորների հետ կապի ամրապնդման լրացուցիչ և օգտակար ձև է։

Պրոպագանդիստական կադրերի պատրաստման արդյունավետ ձև են նաև մարքսիզմ-լենինիզմի համալսարանները։ 1978 թ. երկրում գործում էր 206 այդպիսի համալսարան՝ 229 մասնաճյուղով։ Միայն 10-րդ հնգամյակի տարիներին այդ ուսումնական հաստատություններն ավարտել են ավելի քան 600 հազար պրոպագանդիստներ[14]։ ՀԿԿ Կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի համալսարանը և նրա մասնաճյուղերը նույնպես ամեն տարի պատրաստում են մեծ թվով պրոպագանդիստներ։

ՍՄԿԿ XXVI համագումարը նշեց, որ կուսակցական ուսուցման որակի բարելավման խնդիրն անկարելի է լուծել առանց պրոպագանդիստական կադրերի ընտրության, պատրաստման և նրանց ժամանակին ինֆորմացիա տալու նկատմամբ հիմնավոր մոտեցում ցուցաբերելու[15]։ Չնայած վերջին տարիներին կուսակցական ուսուցման կազմակերպման բնագավառում դրական տեղա-

---

9 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 127։

10 «Политическое самообразование», 1981, № 9, с. 62.

11 «Սովետական Հայաստան», 1. X. 1982։

12 «Вопросы истории КПСС», 1981, № 12, с. 72.

13 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտկոմի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 80։

14 «Вопросы истории КПСС», 1981, № 12, с. 74.

15 «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», էջ 127։

շարժեր են կատարվել, այդ գործում դեռևս կան թերություններ, որոնք իջեցնում են ուսուցման արդյունավետությունը։ Նախ և առաջ կուսակցական լուսավորության շատ դպրոցներում ու սեմինարներում տեսական պատրաստվածությունը բավական չափով չի շաղկապվում մարդկանց հուզող պրոբլեմների լուծման հետ։ Համագումարը նշեց, որ կուսակցական լուսավորության մեջ տակավին արմատախիլ չեն արվել ձևամոլության և աշակերտայնության դրրևևորումները, որոնք նվազեցնում են ունկնդիրների շահագրգռվածությունը տեսության նկատմամբ։ Շատ կազմակերպություններում երբեմն հրապուրվում են գործի քանակական կողմով, ունկնդիրների թվի չափազանց շատ ընդլայնումով։ Այնինչ, կարևորն ուսուցման որակի բարելավումն է։ Ձևամոլություն է դրսևորվում նաև կուսակցական ուսուցման խմբակների կոմպլեկտավորման ժամանակ, երբ հաշվի չեն առնվում ունկնդիրների հետաքրքրությունները, նրանց կրթական մակարդակը և պատահաբար ընտրում են որևէ ձև։ ՀԿԿ Կենտկոմի 1982 թ. ապրիլյան պլենումը մատնանշեց, որ առանձին կուսակցական կազմակերպություններում գաղափարական աշխատանքը ոչ լիովին է համապատասխանում մարդկանց կրթական ու կուլտուրական աճած մակարդակին, նրանց պահանջմունքներին, անբավարար է հաշվի առնվում հասարակության սոցիալ-տնտեսական պրոցեսների ու հոգևոր կյանքի դինամիկան[16]։

Կուսակցական լուսավորության կազմակերպման թերությունները վերացնելու նպատակով ՍՄԿԿ XXVI համագումարը սահմանեց այդ գործի բարելավման հիմնական ուղղությունները։ Խնդիր դրվեց վճռականապես բարձրացնել ուսուցման որակն ու արդյունավետությունը։ Համագումարի որոշումների ու ցուցումների հիման վրա ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն 1981 թ. մայիսի 26-ին որոշում ընդունեց «ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի ներքո կուսակցական ուսուցման հետագա կատարելագործման մասին»[17]։ Որոշման մեջ զարգացվում և կոնկրետացվում են համագումարի հիմնադրույթները կուսակցական ուսուցման և գաղափարական աշխատանքի մասին ընդհանրապես։ Նրանում նախատեսված միջոցառումների իրագործումը հնարավորություն կտա կուսակցական ուսուցման բովանդակությունն ու կազմակերպական ձևերը համապատասխանեցնել զարգացած սոցիալիզմի, համաշխարհային ասպարեզում մղվող գաղափարական պայքարի պահանջներին, կոմունիստների հանրակրթական ու քաղաքական պատրաստության աճած մակարդակին։ Ընդգծվում է, որ կուսակցական լուսավորության արդյունավետությունը կարելի է ապահովել ուսուցման բովանդակության հարստացման և այժմեականացման, կազմակերպական կառուցվածքի փոփոխման, պրոպագանդիստական կադրերի պատրաստման հետագա բարելավման, ուսուցման ուսումնամեթոդական բազայի ամրապնդման, պրոպագանդայի ձևերի հետագա կատարելագործման միջոցով։ Ելնելով արդի ժամանակաշրջանում կուսակցության առջև կանգնած խնդիրներից, Կենտրոնական կոմիտեն հաստատել է կուսակցական ուսուցման նոր կառուցվածք։

Գաղափարական աշխատանքը սերտորեն կապված է տեսության հետ։ Կուսակցության գաղափարական գործունեությունը ծավալվում է գիտության, մարքս-լենինյան տեսության ստեղծագործական զարգացման ու կիրառման հիման վրա։ Կոմունիստական շինարարության ընթացքում ծագում են բարդ պրոբլեմներ՝ կապված էկոնոմիկայի, սոցիալական հարաբերությունների, սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման, աշխատավորների դաստիարակության հետ։ Նման հարցերը, հասկանալի է, չի կարելի լուծել առանց հասարակական կյանքի նոր երևույթների ու պրոցեսների տեսական ընդհանրացման։

Վերջին տարիներին կուսակցությունը կատարել է մի շարք կարևոր տեսական ընդհանրացումներ ու հետևություններ։ Առանձնապես հարկ է նշել

---

16 «Սովետական Հայաստան», 21. IV. 1982։

17 «Политическое самообразование», 1981, № 6, «Партийная жизнь», 1981, № 12.

զարգացած սոցիալիզմի ըմբռնման մշակումը։ Զարգացած սոցիալիզմի մասին, ինչպես հայտնի է, Վ. Ի. Լենինը խոսել է դեռևս 1918 թ.։ Մի փոքր ավելի ուշ նա գրել է. «Թե ինչպես պատկերացնել զարգացած սոցիալիստական հասարակությունը, դա... դժվար չէ։ ...Բայց թե ինչպես գործնականորեն իրականացնել անցումը հին, սովորական ու բոլորին ծանոթ կապիտալիզմից դեպի նոր, դեռևս չծնված, ամուր բազա չունեցող սոցիալիզմը՝ ահա ամենադժվարին խնդիրը։ Այդ անցումը շատ տարիներ կխլի լավագույն դեպքում»[18]։ Լենինյան դրույթների հիման վրա ՍՄԿԿ-ն, եղբայրական մյուս կուսակցությունները մշակեցին զարգացած սոցիալիզմի ըմբռնումը։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեն ՍՄԿԿ XXV և XXVI համագումարների հետևությունները զարգացած սոցիալիստական հասարակության օրինաչափությունների մասին։ Դրանք հնարավորություն տվեցին էականորեն հարստացնել ու ճշտել մեր պատկերացումները հասարակական-տնտեսական նոր ֆորմացիայի լինելիության օրինաչափությունների և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ուղիների մասին։ Զարգացած սոցիալիզմի վերաբերյալ ըմբռնումն օգնում է ավելի ճիշտ հասկանալ պատմական այն վերափոխությունների վիթխարիությունը, որ կատարվել են սոցիալիզմի հիմքերի կառուցումից հետո, սթափ գնահատել ժամանակակից փուլի հնարավորությունները, ծագող պրոբլեմների բնույթը և դրանց լուծման եղանակները։

Մեթոդոլոգիական կարևոր նշանակություն ունի այն դրույթը, որ զարգացած սոցիալիզմն անհրաժեշտ փուլ է կոմունիզմի ճանապարհին, նոր հասարակարգի հասունության սոցիալ-տնտեսական օրինաչափ աստիճան։ Կարևոր է մի այլ հանգամանք։ ՍՍՀՄ և մյուս սոցիալիստական երկրների փորձը վկայում է, որ սոցիալիզմի հիմքերի ստեղծումը, այսինքն՝ շահագործողական դասակարգերի վերացումը և ժողովրդական տնտեսության բոլոր հատվածներում արտադրության միջոցների հանրային սեփականության հաստատումը, դեռևս թույլ չի տալիս սկսել անմիջական անցումը կոմունիզմին։ Պետք է սեփական հիմքի վրա անցնել սոցիալիզմի զարգացման որոշակի փուլեր։ Ընդ որում, պրակտիկան ցույց է տալիս, որ սոցիալիզմի զարգացումը, կատարելագործումը պակաս բարդ, պատասխանատու խնդիր չէ, քան նրա հիմքերի ստեղծումը։ Ոմանք զարգացած սոցիալիզմը պատկերացնում են որպես կարճատև ժամանակահատված։ Բայց դա սխալ տեսակետ է։ Զարգացած սոցիալիզմն անհրաժեշտ և պատմականորեն տևական ժամանակաշրջան է կոմունիստական ֆորմացիայի կազմավորման մեջ։ Այդ հետևությունը տեսական և գործնական մեծ նշանակություն ունի։ Այն մեզ օգնում է ռեալիստորեն մոտենալ կոմունիստական շինարարության խնդիրներին։ Հենվելով զարգացած սոցիալիզմի ըմբռնման վրա, «Կուսակցությունը ճշգրտել և կոնկրետացրել է մեր ծրագրային նպատակների իրականացման ուղիներն ու ժամկետները, սահմանել տևական պատմական ժամանակաշրջանի ստրատեգիան ու տակտիկան»[19]։

Իսկ ե՞րբ է Սովետական Միությունը թևակոխել զարգացած սոցիալիզմի փուլը։ Այս հարցի մասին մեր պատմակուսակցական գրականության մեջ կան տարբեր տեսակետներ։ Ոմանք պնդում են, որ ՍՍՀՄ-ը 1960-ական թվականների սկզբներին է թևակոխել զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը, մյուսների կարծիքով դա տեղի է ունեցել 1970-ական թվականների սկզբներին։ Կարծում ենք, որ հիմնավոր է առաջին տեսակետը։ ՍՄԿԿ երրորդ ծրագրի ընդունումն իրենով նշանավորում է սովետական հասարակության թևակոխումը զարգացած սոցիալիզմի փուլը։

Զարգացած սոցիալիզմի ըմբռնման հետ սերտորեն առնչվում է մեր երկրում անդասակարգ հասարակություն կառուցելու հարցը, որին մեծ ուշադրություն նվիրեց ՍՄԿԿ XXVI համագումարը։ «70-ական թվականներին,— ընդգծվեց համագումարում,— շարունակվում էր սովետական հասարակության

---

18 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 126։

19 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 128։

բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի մերձեցումը։ Մեր նպատակն է ստեղծել մի հասարակություն, որի մեջ չի լինի մարդկանց բաժանում դասակարգերի։ Եվ կարելի է որոշակիորեն ասել, մենք աստիճանաբար, բայց վրստահորեն առաջ ենք ընթանում դեպի այդ մեծ նպատակը»[20]։ Այս հետևությունը բխում է այն փոփոխություններից, որոնք զարգացած սոցիալիզմի պայմաններում տեղի են ունեցել բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության կազմում։ Ի՞նչ փոփոխություններ են դրանք։ Նախ, գնալով ավելի ու ավելի բարձրանում է բանվոր դասակարգի դերը հասարակության կյանքում, աճում է նրա թիվը։ Ներկայումս մեր երկրում կա՝ շուրջ 80 միլիոն բանվոր, այլ խոսքով՝ զբաղված բնակչության մոտ $^2/_3$-ը[21]։ Դա նշանակում է, որ բանվոր դասակարգը դարձել է ոչ թե պարզապես ամենաբազմաքանակ դասակարգը, այլ աշխատավոր ժողովրդի մեծամասնությունը։ Բանվոր դասակարգի առաջատար դերի ամրապնդումը կապված է նրա գաղափարաքաղաքական հասունության, կրթվածության և մասնագիտական որակավորման հետ։ Այսպես, օրինակ, տասը տարի առաջ բանվորների կեսից միայն փոքր-ինչ ավելին ուներ միջնակարգ և բարձրագույն կրթություն, իսկ 1981 թ.՝ երեք քառորդը[22]։ Բանվոր դասակարգի քանակական ու որակական մեծ աճ է տեղի ունեցել նաև Սովետական Հայաստանում[23]։ Ըստ որում, Հայաստանի բանվոր դասակարգի քանակական աճը կատարվել է ավելի բարձր տեմպերով։ Այսպես, եթե ամբողջությամբ վերցրած, ՍՍՀՄ-ում բանվորների թիվը 1940—1978 թթ. ավելացել է մոտ 3,2 անգամ, ապա Հայաստանում՝ 8,42 անգամ[24]։ Դա պատահական չէ. Սովետական Հայաստանի արդյունաբերական զարգացման տեմպերը նույնպես բարձր էին միութենականի համեմատությամբ։ Աճել է նաև հանրապետության բանվոր դասակարգի կրթական մակարդակը։ Այսպես, եթե 1939 թ. Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված 1000 բանվորից բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեին 13,2%-ը, ապա 1970-ական թվականներին այդ ցուցանիշը բարձրացավ մոտավորապես 75%-ի[25]։

Խոր փոփոխություններ են տեղի ունենում նաև երկրի կոլտնտեսային գյուղացիության կյանքում։ Նրա աշխատանքը աստիճանաբար մերձենում է բանվորների աշխատանքին։ Սոցիալական դրությամբ նա ավելի ու ավելի է մոտենում բանվոր դասակարգին, իր կրթական մակարդակով քիչ բանով է տարբերվում քաղաքային բնակչությունից։ Աճում է միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող կոլտնտեսականների թիվը՝ վերջին 10 տարում 39%-ից հասնելով ավելի քան 60-ի[26]։ Նույնպիսի պրոցես նկատելի է նաև Սովետական Հայաստանում։ 1939 թ. բարձրագույն և միջնակարգ (լրիվ ու թերի) կրթություն ունեին հանրապետության աշխատող կոլտնտեսականների 2,5, իսկ 1970 թ.՝ 48,1%-ը[27]։ 1970-ական թվականներին հանրապետության կոլտնտեսային գյուղացիության կրթական մակարդակը ավելի աճեց։

Գյուղի սոցիալական կառուցվածքի վրա մեծ ազդեցություն է գործում սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցումը, միջտնտեսային կազմակերպությունների զարգացումը։ Փոփոխվում են կոլտնտեսականների աշխատանքի կազմակերպման և վարձատրության ձևերը, կոլտնտեսականների վրա տարածվում է բանվորների ու ծառայողների համար սահմանված սոցիա-

---

20 Նույն տեղում, էջ 81։

21 Նույն տեղում, էջ 84։

22 Նույն տեղում։

23 Այդ մասին մանրամասն տե՛ս Ս. Ամիրյան, Հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխումն ու զարգացումը Հայկական ՍՍՀ-ում, Երևան, 1981։

24 Նույն տեղում, էջ 312։

25 Նույն տեղում, էջ 326։

26 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 85։

27 Ս. Ամիրյան, նշվ. աշխ., էջ 349։

լական ապահովության սիստեմը։ Այս ամենը, ինչ խոսք, տանում է դեպի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության սոցիալական դրության միջև եղած տարբերության վերացումը։ Այս առումով բացառիկ նշանակություն կունենա ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումի որոշումների կենսագործումը։ Դա թույլ կտա ոչ միայն լուծել պարենային պրոբլեմը, այլև վերափոխել գյուղի դեմքը։ Բավական է նշել, որ գյուղում բնակարանային, կուլտուր-կենցաղային, ճանապարհային շինարարության նպատակին 1980-ական թվականներին կհատկացվի մոտավորապես 160 միլրդ ռ.[28]։ «Դա մեծ թիվ է,— նշվեց պլենումում,— բայց դա ոչ միայն մեծ թիվ է, դա մեծ քաղաքականություն է, որ ուղղված է քաղաքի և գյուղի միջև եղած սոցիալական տարբերությունների վերացման նպատակին»[29]։

Վերջին տարիներին բոլորից արագ աճում էր մտավորականության թիվը։ Ներկայումս երկրում յուրաքանչյուր չորրորդ աշխատողը հիմնականում կապված է մտավոր աշխատանքի հետ[30]։ Մեր կյանքի բոլոր բնագավառներում մտավորականությունն ավելի ու ավելի նշանակալի դեր է կատարում։ Հարկ է նշել, որ իր հերթին միլիոնավոր բանվորների և կոլտնտեսականների արտադրական գործունեության մեջ ավելի ու ավելի սերտորեն է միահյուսվում ֆիզիկական ու մտավոր աշխատանքը։ Վերջին չորս տասնամյակում խոշոր քանակական փոփոխություն է կրել նաև Սովետական Հայաստանի սոցիալիստական մտավորականությունը։ Աճել է նրա տեսակարար կշիռը հանրապետության սոցիալ-դասակարգային կազմում. այն 1939 թ. 12—13%-ից աճել է երկու անգամ և 1978 թ. հասել մոտ 24—25%-ի[31]։

Վերլուծելով սովետական հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները, ՍՄԿԿ XXVI համագումարը մարքսիստական-լենինյան տեսության մեջ առաջին անգամ առաջադրեց մի հետաքրքիր դրույթ։ «Հասարակության անդասակարգ կառուցվածքի կազմավորումը,— նշվեց համագումարում,— գլխավորապես և հիմնականում տեղի կունենա հասուն սոցիալիզմի պատմական շրջանակներում»[32]։ Այդ եզրակացությունն էականորեն հարստացնում է զարգացած սոցիալիզմի ըմբռնումը։ Այս խնդրի լուծումը, իհարկե, ընդգրկում է պատմական երկարատև ժամանակաշրջան։

Անդրադառնալով հասարակության անդասակարգ կառուցվածքի կազմավորման պրոցեսին, համագումարը նշեց, որ «դա օբյեկտիվ, բայց բնավ էլ ոչ տարերային պրոցես է։ Դրանում կարևոր դեր է խաղում կուսակցության ու պետության սոցիալական քաղաքականությունը»[33]։ Ելնելով դրանից, համագումարը սահմանեց կուսակցության սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները 11-րդ հնգամյակում և 1980-ական թվականների համար։ Խնդիր է դրվում ամենից առաջ մեծ ուշադրություն դարձնել այն պրոբլեմների լուծման վրա, որոնք պահանջում են հաշվի առնել հասարակության յուրաքանչյուր խմբի առանձնահատկություններն ոգ շահերը, հաղթահարել սոցիալական տարբերությունները տարածքային իմաստով, որը կապված է երկրի մի շարք շրջանների (Արևմտյան Սիբիր, ԲԱՄ-ի գոտի) կուլտուր-կենցաղային պայմանների ոչ միատեսակության հետ։ Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումը պահանջում է ավելացնել բնակչության հոսքը դեպի երկրի արևելյան շրջանները։ Նախատեսվում է 11-րդ հնգամյակում այդ շրջաններում էլ ավելի արագ տեմպերով իրականացնել բնակարանային և կուլտուր-կենցաղային շինարարությունը։ Կուժեղացվի հոգատարությունն ընտանիքի, նորապսակների, կանանց, կենսաթոշակառուների նկատմամբ,

28 «Սովետական Հայաստան», 25. V. 1982 թ.։

29 Նույն տեղում։

30 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 86։

31 Ս. Ամիրյան, նշվ., աշխ., էջ 356։

32 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 86։

33 Նույն տեղում, էջ 84։

կկրճատվի ձեռքի սակավ որակյալ, ծանր ֆիզիկական աշխատանքը, կբարձրացվի աշխատավարձն ու կենսաթոշակների չափը և այլն։ Այս ամենը կնպաստի անդասակարգ հասարակարգի կազմավորմանը։

Այն եզրակացությունը, որ հասարակության անդասակարգ կառուցվածքի կազմավորումը գլխավորապես և հիմնականում տեղի կունենա զարգացած սոցիալիզմի պատմական շրջանակներում, կարևոր նշանակություն ունի նաև մի այլ առումով։ Այդ պրոցեսի առաջատար ուժը եղել և մնում է բանվոր դասակարգը։ Նրա հեղափոխական գաղափարախոսությունն ու բարոյականությունը, կոլեկտիվիստական հոգեբանությունը, նրա շահերն ու իդեալները ներկայումս դառնում են սովետական հասարակության բոլոր խավերի սեփականությունը։ Բանվոր դասակարգի առաջատար դերը կպահպանվի նաև առաջիկայում։ Այս փաստերը հերքում են Արևմուտքում լայն տարածում ստացած այն ռևիզիոնիստական տեսությունը, որի համաձայն իբր թե գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով մեր օրերում գնալով թուլանում է բանվոր դասակարգի դերը, կրճատվում է նրա թիվը և հասարակության մեջ վճռական դերն անցնում է տեխնիկական մտավորականությանը։

Հասարակության սոցիալական կառուցվածքը սերտորեն կապված է ազգային կառուցվածքի հետ։ Պատահական չէ, որ կուսակցությունն առանձնակի ուշադրություն է նվիրում այդ հարցերին։ Ինչպես նշել է Յու. Վ. Անդրոպովը, «ազգային հարաբերությունների մեջ 60 տարում տեղի ունեցած ռեալ որակական փոփոխությունները վկայում են, որ ազգային հարցը այն տեսքով, ինչ տեսքով մեզ թողնվել էր շահագործողական հասարակարգի կողմից, լուծված է հաջողությամբ, լուծված է վերջնականապես և անդրադառնալիորեն։ Պատմության մեջ առաջին անգամ երկրի բազմազգ կազմը նրա թուլության աղբյուրից վերածվել է ուժի ու ծաղկման աղբյուրի»[34]։ Դա ամենից առաջ նշանակում է, որ վերացել է ազգերի և ազգությունների փաստական անհավասարությունը։ Հետամնաց ազգային ծայրամասեր այլևս գոյություն չունեն։ Էկոնոմիկայի և կուլտուրայի իսկական ծաղկման են հասել սովետական բոլոր հանրապետությունները, ձևավորվել է երկրի միասնական միութենական ժողովրդատնտեսական կոմպլեքսը։ Հիշենք որոշ փաստեր։ Միայն 10-րդ հնգամյակում Ղազախստանում գործարկվել են 250-ից ավելի ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություններ, խոշոր արտադրամասեր և արտադրություններ[35]։ Միջին Ասիայի հանրապետություններում, ուր մինչև Հոկտեմբերը հողագործին հայտնի էր միայն ձեռքի հյուծիչ աշխատանքը, ներկայումս 100 հա վարելահողին ընկնող էներգազինվածությունը կրկնակի գերազանցում է միութենական միջին ցուցանիշները[36]։ Արագ տեմպերով է զարգանում անդրկովկասյան հանրապետությունների ժողովրդական տնտեսությունը։ Նշենք միայն մեկ փաստ։ Հայկական ՍՍՀ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1922 թ. համեմատությամբ, երբ կազմավորվում էր ՍՍՀՄ-ը, 1981 թ. աճել է 1008 անգամ[37]։ Նման օրինակներ կարելի է բերել նաև մյուս հանրապետություններից։ Այս հաջողությունները ձեռք են բերվել սովետական ժողովրդի համերաշխ ընտանիքում։ «Մեր ժողովուրդը,— ՀԿԿ XXVII համագումարում ասաց Կ. Ս. Դեմիրճյանը,— երբեք չի մոռանա այն հսկայական անշահախնդիր օգնությունը, որ մշտապես ցույց է տվել ռուս ժողովուրդը թե՛ նրա համար ծանր պատմական ժամանակաշրջանում, թե՛ սոցիալիստական ու կոմունիստական շինարարության բոլոր փուլերում։ Ռուս մեծ ժողովրդի հետ, սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ եղբայրական բարեկամությունը մեր ժողովրդի բարոյաքաղաքական, սոցիալական վիթխարի ձեռքբերումն է»[38]։

34 Յու. Վ. Անդրոպով, ՍՍՀՄ վաթսուն տարին, Երևան, 1983, էջ 9։

35 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 90։

36 Նույն տեղում։

37 «Правда», 24. V. 1982.

38 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտկոմի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 86։

Զարգացած սոցիալիստական հասարակության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ տեղի է ունենում ազգերի ու ազգությունների հետագա ծաղկում և անշեղ մերձեցում։ Դա օբյեկտիվ բնույթ ունի։ Այն չի կարելի ոչ արհեստականորեն արագացնել, ոչ էլ արգելակել։ Սոցիալիստական ազգերին հատուկ է ինտերնացիոնալիզմը, որի գործնական դրսևորման լավ օրինակ է Թուրքսիբի, Ուրալ-Կուզբասի, ԲԱՄ-ի շինարարությունը, խոպանի յուրացումը, համաժողովրդական օգնությունը երկրաշարժից տուժած Տաշքենդին։ Այժմ կուսակցությունը և սովետական կառավարությունը իրագործում են ՌՍՖՍՀ-ի ոչ սևահողային գոտու զարգացման լայն միջոցառումներ, գոտի, որը մի շարք պատճառների բերումով հայտնվել է դժվարին պայմաններում։ Այդ խնդիրները կարող են լուծվել միայն բոլոր հանրապետությունների համատեղ ջանքերով։ Ակտիվ մասնակցությունը ոչ սևահողային գոտու զարգացման կոմպլեքսային ծրագրի իրականացման գործին ինտերնացիոնալիզմ է գործնականում։ «Ազգային հարցի լուծման գործում եղած հաջողությունները,— նշել է Յու. Վ. Անդրոպովը,— բնավ չեն նշանակում, թե վերացել են այն բոլոր պրոբլեմները, որոնք ծնում է միասնական պետության շրջանակներում բազմաթիվ ազգերի ու ազգությունների կյանքի ու աշխատանքի բուն փաստը։ Նման բան հազիվ թե հնարավոր է, քանի դեռ գոյություն ունեն ազգերը, քանի դեռ կան ազգային տարբերությունները։ Իսկ դրանք գոյություն կունենան երկար ժամանակ, շատ ավելի երկար, քան դասակարգային տարբերությունները»[39]։

Ելնելով այս հանգամանքներից, ՍՄԿԿ-ն սահմանել է զարգացած սոցիալիզմի փուլում ազգային քաղաքականության հրատապ խնդիրները, որոնք արտացոլվել են կուսակցության XXVI համագումարի և ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին վերաբերող փաստաթղթերում։ Խնդիր է դրվում ապահովել տարբեր շրջանների ու հանրապետությունների ջանքերի է՛լ ավելի սերտ միավորումը, նրանց բնական և աշխատանքային ռեսուրսների, կլիմայական առանձնահատկությունների առավել խելացի օգտագործումը, պահանջվում է կատարելագործել արտադրողական ուժերի տեղաբաշխումը, ռեգեոնալ մասնագիտացումն ու կոոպերացումը, էապես բարելավել տրանսպորտի աշխատանքը, ավելի բեղմնավոր դարձնել ազգերի հոգևոր հարստությունների փոխանակումը, չթուլացող ուշադրություն նվիրել բանվոր դասակարգի ազգային ջոկատների աճին։

ՍՄԿԿ XXVI համագումարը, ընդհանրացնելով գաղափարական աշխատանքի և տեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունները, միաժամանակ քննադատեց թերությունները, մեծ խնդիրներ դրեց հասարակագետների առջև, որոշեց հասարակական, և ոչ միայն հասարակական, գիտությունների զարգացման գլխավոր ուղղությունները 1980-ական թվականների համար։

XXVI СЪЕЗД КПСС И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИДЕОЛОГИЧЕСКОЙ РАБОТЫ

ГРИГОР АЙВАЗЯН

Резюме

XXVI съезд КПСС—важная веха в жизни Коммунистической партии и советского народа. Съезд проанализировал накопленный опыт и выдвинул новые задачи в области внутренней и внешней политики. Особое место в работе съезда заняли вопросы идеологической работы партии. Съезд поставил задачу поднять результативность идеологической работы.

---

39 Յու. Վ. Անդրոպով, ՍՍՀՄ վաթսուն տարին, էջ 10։